

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՏՈՄՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և
միջազգային տնտեսական
հարաբերությունների ֆակուլտետի
դեկան, տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

ՀԱՄՄԻԿ ԶՈՒՀԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության
տնտեսության ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ազատ տնտեսական գոտին (ԱՏԳ) հատուկ իրավական կարգավիճակ ունեցող տարածք է, որի ստեղծման հիմնական նպատակն ինչպես երկրի, այնպես էլ վերջինիս առանձին շրջանների տնտեսական զարգացման խթանումն է: ԱՏԳ-ները ողջ աշխարհում դիտվում են որպես տնտեսական քաղաքականության արդյունավետ գործիքներ: Դրանց հիման վրա զարգանում են հատկապես երկրների թերզարգացած շրջանները, ինչպես նաև այն թիրախային ոլորտները, որոնք նպաստում են երկրի տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության ու մրցունակության մակարդակի բարձրացմանը: ԱՏԳ-ները թույլ են տալիս ներդնել արդիական տեխնոլոգիաներ, կառավարման նոր մեխանիզմներ, ստեղծել մրցունակ աշխատատեղեր և ավելացնել ապրանքների ու ծառայությունների արտադրանքի ծավալները:

ԱՏԳ-ների դերը հատկապես մեծ է նորարարական համակարգերի զարգացման գործում: ԱՏԳ-ները, նշյալ իմաստով, յուրատեսակ համալիր տնտեսավարման համակարգեր են, որոնք առաջացման և զարգացման ընթացքում ընդգրկում են տնտեսության մի քանի ոլորտներ՝ ապահովելով ուղղակի կապ գիտահետազոտական աշխատանքների և դրանց արդյունքների կիրառության միջև: Այդ մասին է վկայում մի շարք երկրների՝ այս ոլորտում ունեցած փորձը, երբ համալսարաններին կից ստեղծվում են տեխնոլոգիաներ, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ, ինչպես օրինակ՝ եվրոպական որոշ երկրներում, ԱՄՆ-ում և այլն:

Առաջին սերնդի ԱՏԳ-ների գործունեության հիմքում ընկած է եղել ազատ առևտրի սկզբունքը: Մինչև 1950-ական թվականները ԱՏԳ-ների հիմնական մասը տեղաբաշխված էր հենց նմանատիպ գոտիներում: Որո-

շակի ուղղակի կամ անուղղակի տնտեսական շահեր իրացնելու նպատակով մման ԱՏԳ-ները տեղակայված էին աշխարհագրական որոշակի տարածքներում, սովորաբար՝ օդանավակայաններում, նավահանգիստներում կամ հաղորդակցման այլ կենտրոններում¹: Այս առումով, ազատ տնտեսական գոտու ստեղծումը միասնական մաքսային ռեժիմի և հատկապես անմաքս առևտուր իրականացնելու սկզբունքների հիման վրա, կարծես ընդլայնում է առևտրային գոտու սահմանները՝ տվյալ երկրի որոշակի տարածքից ընդգրկելով մի քանի երկրների տարածքներ: Այս տեսակետից՝ ԱՏԳ տարածքում մաքսային արտոնությունների տրամադրումը չեզոքանում է բոլոր այն երկրների համար, որոնք, ընդունող երկիր լինելով, միաժամանակ նաև ազատ տնտեսական գոտու անդամ են: Այլ կերպ ասած՝ օտարերկրյա կապիտալի համար գրավիչ հիմնական պայմաններն են ընդունող երկրի սահմանած հարկային արտոնությունները, էժան աշխատուժը, սպառման շուկաներին առավել մոտ լինելը և այլն:

Նշված նպատակներն իրագործելու համար ոլորտում գործող տնտեսավարողների համար ստեղծվում են բարենպաստ հարկային և իրավական պայմաններ, ինչը թույլ է տալիս զարգացնել բարձր տեխնոլոգիաներ ոչ միայն սեփական ներուժով և իրացնել ոլորտի արտադրանքը ներքին ու արտաքին շուկաներում, այլև ներգրավել զգալի քանակի արտասահմանյան առաջատար տեխնոլոգիաներ: Այսինքն՝ ԱՏԳ-ները տնտեսության մեջ ձևավորվում են ոչ թե արհեստածին կերպով, այլ, օգտագործելով երկրի գիտական ներուժը, հետապնդում են հստակ նպատակներ՝ խթանել արտադրության այս կամ այն ոլորտի զարգացումը, ինչպես նաև ապահովել օտարերկրյա ներդրումների հոսք դեպի տվյալ երկիր: Տեխնոլոգիական կողմնորոշում ունեցող ԱՏԳ-ները ներառում են համալսարաններ, հետազոտական կենտրոններ, արդյունաբերական ձեռնարկություններ, արտադրական համալիրներ և, գործելով միասին, կյանքի են կոչում նորարարական հետազոտությունների ու ուսումնասիրությունների արդյունքները: Ուստի, տնտեսական և սոցիալական կառուցվածքների միավորման և դրանց արդյունավետ համագործակցության արդյունքում միայն կարելի է ձեռք բերել բարձր տեխնոլոգիական ոլորտների արտադրողականության աճ:

Այսպիսով՝ ԱՏԳ-ների արդյունավետ գործունեության նախապայմաններն են. նախ՝ անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի, ապա՝ ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը: **Ինստիտուցիոնալ համակարգը**, բացի օրենսդրական և իրավական ենթահամակարգերից (այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքի ինստիտուտի, լիցենզավորման, արտոնագրման ընթացակարգերի, հարկային ու մաքսային օրենսդրությունների բարելավման), ներառում է նաև ոչ ֆորմալ ինստիտուտների ենթահամակարգը, ինչպիսիք են, օրինակ՝ մտածողության արմատացած կարծրատիպերը, հասարակության՝ փոփոխություններին պատրաստ լինելը (կամ չլինելը), օրինականության մակարդակը, տնտեսության տարբեր ոլորտներում մենաշնորհների գոյությունը և այլն: **Ենթակառուցվածքների համակարգում** կարևորվում են կապի և հաղորդակցման միջոցների առկա-

¹ Տե՛ս <http://archiv.ub.uni-heidelberg.de/volltextserver/volltexte/2003/3244/pdf/fez-meng.pdf>

յությունը, դրանց որակական ու քանակական գնահատականը, համապատասխան մասնագիտացումներով բուհական համակարգի, գիտահետազոտական հաստատությունների գոյությունն ու դրանց ներուժը և այլն: Այսինքն՝ անհրաժեշտ է ստեղծել համապատասխան միջավայր բարձր տեխնոլոգիական, գիտատար ներուժ պահանջող ոլորտների զարգացման համար:

ԱՏԳ-ների ձևավորումը, այդպիսով, պահանջում է համալիր միջոցառումների իրականացում, և այս համատեքստում առաջանում է երկու տիպի խնդիր. օրենսդրության հստակեցում՝ մտավոր սեփականության ինստիտուտի կայացում, արտոնությունների տրամադրման համակարգի ճշգրտում և, որ ամենակարևորն է՝ օրենքների կիրառում, երկրորդ՝ գիտություն-արտադրություն կապի զարգացում, որը պայմանավորված է նաև առաջին խնդրի լուծմամբ:

ԱՏԳ-ինստիտուցիոնալ համակարգը

ՀՀ-ում ԱՏԳ-ների ստեղծման հիմնական նպատակը ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավման միջոցով առաջատար ու բարձրակարգ տեխնոլոգիաների ներմուծումն է, ինչն էլ կհանգեցնի արտահանման ծավալների մեծացման, նոր աշխատատեղերի ստեղծման՝ ապահովելով կայուն տնտեսական զարգացում: Այս առումով իրավական դաշտի ձևավորման հետ կապված հստակեցումներ են կատարվել: 2011 թվականի մայիսի 25-ին ՀՀ ԱԺ-ն ընդունել է ԱՏԳ-ների գործունեությունը կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթ՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսված հարկային և մաքսային արտոնությունների գործադրման համար փոփոխություններ և լրացումներ են կատարվել մի շարք այլ օրենքներում²: Համաձայն նշված օրենքի՝ ԱՏԳ տարածքում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին տրվում են մի շարք արտոնություններ՝ ավելացված արժեքի հարկից ազատում ԱՏԳ կազմակերպչին և շահագործողին, շահութահարկից՝ իրավաբանական անձանց, եկամտահարկից՝ անհատ ձեռներեցներին, ԱՏԳ ռեզիդենտներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող՝ ԱՏԳ տարածքում շահագործվող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների ազատում գույքահարկից և այլն³:

Լայն առումով, ԱՏԳ հիմնական նպատակներից մեկը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումն է, որոնք երկիր կբերեն նոր տեխնոլոգիաներ, կառավարման մշակույթ, ինչպես նաև կապահովեն բարձրակարգ արտաքին շուկաների մատչելիություն: Այս տեսակետից, հարկային և մաքսային արտոնությունների տրամադրումը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է: Արտաքին ներդրողները գնում են այս կամ այն երկիր ոչ միայն այնտեղի նպաստավոր ինստիտուցիոնալ պայմաններից ելնելով, այլև այնտեղ առկա որակյալ մարդկային ռեսուրսներով պայմանավորված: ԱՏԳ ստեղծող պետության պահանջները պետք է հստակ

² Տե՛ս <http://www.mineconomy.am/arm/61/free.html>

³ Տե՛ս <http://www.mineconomy.am/arm/61/free.html>

լինեն թե՛ ներդրումների ուղղությունների, թե՛ աշխատատեղերի բնույթի ու որակի և թե՛ արտադրված արտադրանքի կամ մատուցված ծառայությունների արտահանման հստակեցման իմաստով: ԱՏԳ գործունեության համաշխարհային փորձի դիտարկումները ցույց են տալիս՝ եթե ԱՏԳ ստեղծման առաջին տարում դրա տարածքի 1/3-ը զբաղեցնում են ներդրողները, ապա ծրագրի մեկնարկը համարվում է հաջողված:

2012 թվականի փետրվարի 2-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հավանություն է տվել «ՌԱՕ ՍԱՐՍ» և «Երևանի մաքեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ների տարածքներում ԱՏԳ ստեղծելու և «ՄԻՏՐՈՆԻՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին այդ գոտու կազմակերպիչ ճանաչելու մասին որոշման նախագծին: Ռուսական այս ընկերությունը բարձր տեխնոլոգիական ոլորտի եվրոպական ամենախոշոր ընկերություններից մեկն է: Նշված ՓԲԸ-ների տարածքներում ստեղծվող ազատ տնտեսական գոտին կունենա բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և կենսատեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական ձևավորման (դիզայն) և հեռահաղորդակցության ոլորտներում: Նախատեսվում է մինչև 2020 թ. այստեղ ստեղծել շուրջ 20.000 նոր աշխատատեղ:

2011 թվականի հուլիսի 14-ին Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության) և «Կորպորասիոն Ամերիկա Տ.Ա.» ընկերության միջև ստորագրվել է համաձայնագիր «Չվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակով համագործակցության վերաբերյալ: 2011 թ. մայիսի 25-ից ազատ տնտեսական գոտին ապահովված է սառեցման համակարգով կահավորված պահեստային տնտեսությամբ: 2012 թվականի ընթացքում ազատ տնտեսական գոտին ապահովված կլինի նաև տեսակավորման և փաթեթավորման համար նախատեսվող արտադրական և գրասենյակային, ինչպես նաև կառուցապատման հնարավորությամբ տարածքներով⁴:

ԱՏԳ-ներում, ֆինանսական, հարկային արտոնությունների տրամադրման հետ մեկտեղ, բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու հիմնական պայմաններից է մաքսային արտոնությունների առկայությունը: ՀՀ-ում ԱՏԳ-ներին տրված մաքսային արտոնությունները հետևյալն են. «Ներմուծում՝ ազատ տնտեսական գոտի» ռեժիմով բաց թողնված ապրանքների, ինչպես նաև դրանց օգտագործմամբ այստեղ արտադրված ապրանքների՝ ՀՀ տարածքից այլ երկրներ «արտահանում՝ ազատ շրջանառության համար» կամ «վերաարտահանում» ռեժիմներով՝ առանց մաքսային վճարների գանձման և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

2011 թ. ԱՊՀ անդամ երկրների միջև կնքվել է ազատ առևտրի գոտի ստեղծելու համաձայնագիր, որը նախատեսում է երկկողմանի համաձայնագրերի համակարգը փոխարինել առևտրային ռեժիմի միացյալ համա-

⁴ Տե՛ս <http://www.mineconomy.am/arm/23/text.html>

կարգով: Այսինքն՝ երկկողմանի պայմանագրերի փոխարեն գործելու է բազմակողմ հիմունքներով համաձայնագրային ռեժիմ: Առևտուրն անդամ երկրների միջև հետագայում իրականացվելու է առանց մաքսատուրքերի գանձման: Բնականաբար, այն երկրները, որոնք մաքսային միության անդամ չեն (ինչպես Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը), այդ թվում՝ Հայաստանը, հնարավորություն կունենան մեծացնելու արտահանման ծավալները:

Դեռևս 2006 թ. նորամուծական գործունեության պետական աջակցման իրավական հիմքերն ամրագրելու նպատակով ընդունվել էր «ՀՀ օրենքը ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին»⁵, որով նախատեսվում է. ա) վենչուրային, ներդրումային հիմնադրամների ստեղծման և նորամուծական գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ստեղծում, բ) ֆինանսական և ներդրումային օգնություն, երաշխիքների ապահովում, գ) պետական գույքի օգտագործման իրավունքի տրամադրում, դ) նորարարական ենթակառուցվածքների՝ գիտաինովացիոն կենտրոնների, հիմնադրամների, տեխնոպարկերի, բիզնես ինկուբատորների ստեղծմանն ու զարգացմանն աջակցություն, ե) համապատասխան կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանն աջակցություն:

Պետական նորաստեղծական քաղաքականությունն իրականացվում է տարեկան ծրագրով, որը ներառում է հետևյալ միջոցառումները՝ ա) նորարարական ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում, բ) որոշակի նախագծերի իրականացում, գ) կադրերի պատրաստում և վերապատրաստում, դ) խորհրդատվություն, ե) տեխնոլոգիաների փոխանցում և առևտրայնացում, զ) միջազգային չափորոշիչների ներդրում:

SS ոլորտը հաճախ համարվում է գիտատար, որի զարգացումը մեծապես կախված է դրան առնչվող հարակից բուհական համակարգի գործունեությունից և արդյունավետության աստիճանից: Գիտական ներուժի, բարձրորակ ու մրցունակ կադրերի պատրաստման և վերապատրաստման համար նախևառաջ անհրաժեշտ է ստեղծել ու զարգացնել կենսունակ կրթական համակարգ: Այսինքն՝ կրթությունը կլինի անհրաժեշտություն, իսկ նպատակը՝ գիտելիքների, այլ ոչ թե համապատասխան մասնագիտական վկայականի ձեռքբերումը:

ԱՏԳ ենթակառուցվածքների համակարգը

ՀՀ-ում գիտություն-արտադրություն կապը թույլ է զարգացած (թեև վերջին տարիներին այս ոլորտում գրանցվել են որոշակի փոփոխություններ), ուստի գիտատար արտադրական համալիրների գործարկումը, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտիների տեսքով, կնպաստի ոչ միայն գիտական ու հետազոտական աշխատանքների ներդրման և կիրառման խթանմանը, այլև վերջիններիս որակի ու մրցունակության բարձրացմանը: Համաշխարհային բանկի տվյալների համաձայն (աղյուսակ 1)՝ ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտի արդյունքների արտահանման ծավալները կազ-

⁵ Տե՛ս <http://www.caps.am/data.php/721.pdf>

մում են ընդհանուր արտահանման 1-2%-ը, մինչդեռ ՏՀՏ ծառայությունների մասնավորում են 15-17%-ի սահմաններում, որը բավականաչափ բարձր ցուցանիշ է՝ համեմատած տարածաշրջանի մյուս երկրների հետ:

Աղյուսակ 1

ՀՀ բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման շարժընթացը (2007-2010 թթ.)⁶

	2007	2008	2009	2010
ԲՏ* արտահանում (արդյունաբերական արտադրանքի նկատմամբ, %)	1	1	2	2
ԲՏ արտահանում (ընթացիկ, ԱՄՆ դոլար)	9,241,732	11,464,433	6,633,120	..
ՏՀՏ** արտադրանքի արտահանում (ընդհանուր արտահանման նկատմամբ, %)	2	1	2	..
ՏՀՏ արտադրանքի ներմուծում (ընդհանուր ներմուծման նկատմամբ, %)	6	6	5	..
ՏՀՏ ծառայությունների արտահանում ծառայությունների արտահանման նկատմամբ, %)	15	17	16	17
ՏՀՏ ծառայությունների արտահանում (ընթացիկ, ԱՄՆ դոլար)	84,950,000	112,519,058	94,921,663	128,050,000

* Բարձր տեխնոլոգիաներ

** Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ

Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ «Հեռահաղորդակցություն, համակարգիչներ և այլն (ծառայությունների արտահանման նկատմամբ, %))» ցուցանիշով ՀՀ-ն բավականաչափ մոտ է բարձր եկամուտներ ունեցող երկրներին (աղյուսակ 2): Ընդ որում, այս բնագավառի համախառն թողարկումը նույնիսկ վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում լուրջ հետընթաց չի ունեցել:

Աղյուսակ 2

Բարձր տեխնոլոգիական ծառայությունների ծավալների փոփոխությունները աշխարհում՝ ըստ ՀԲ տվյալների (2008-2010 թթ.)⁷

	2008	2009	2010
Ավստրալիա	23.7122967		
Ավստրիա	37.9230642	38.7447966	38.0072148
Բելգիա	49.4137757	56.0129795	54.020194
Կանադա	49.6438112	50.8426593	49.2941366
Չեխիա	37.6284057	38.2575963	40.0627445
Էստոնիա	36.1860398	36.8363905	34.8758885
Ֆինլանդիա	75.7430707	77.4242467	75.6018097
Ֆրանսիա	39.4613434	41.1910805	40.8515752

⁶ <http://databank.worldbank.org>

⁷ <http://databank.worldbank.org>

Գերմանիա	51.814203	55.1037249	53.774713
Հունաստան	8.19469747	9.58401614	10.703896
Հունգարիա	49.1837766	49.6650279	52.0124768
Իսլանդիա	27.9305222	31.0788204	28.9430266
Իռլանդիա	66.896706	69.8898985	71.4953501
Իսրայել	60.4055693	67.6315777	62.6625668
ԱՄՆ	45.3613451	47.6902477	47.3740105
Հայաստան	24.4093436	22.2485259	23.2075323
Իտալիա	38.7755201	38.3881426	40.763417
Ճապոնիա	56.9514004	62.906491	59.6665243
Կորեա	35.0979334	44.0780279	38.2800239
Լյուքսեմբուրգ	21.7604068	24.7282377	22.7302384
Նիդեռլանդներ	55.9094498	58.3087798	57.8245426
Նոր Զելանդիա	23.553822	24.196446	24.4700058
Նորվեգիա	39.3775071	44.4331195	45.0315735
Լեհաստան	34.0600298	37.3145657	41.7935082
Պորտուգալիա	29.9395677	30.6313377	28.7843229
Սլովակիա	32.2954923	27.0383604	29.6419346
Սլովենիա	31.9287347	31.4902877	29.8199844
Իսպանիա	34.8235068	36.0394961	36.3099993
Շվեդիա	62.4418958	63.0945679	65.3010974
Շվեյցարիա	40.2232188	45.7197726	50.5743986
Միացյալ Թագավորություն	44.8143449	46.9110248	49.6473985

Այդուհանդերձ, ՀՀ ՏՀՏ ոլորտում 2008-2011 թթ. էական կառուցվածքային փոփոխություններ են գրանցվել. եթե 2008 թ. արտադրանքի 62%-ը արտասահմանյան շուկա, և ընդամենը 38%-ն էր իրացվում տեղական շուկայում, ապա 2011 թ. ներքին սպառման ծավալները կազմում են ոլորտի արտադրանքի ամբողջ ծավալի 56%-ը, իսկ արտահանումը՝ 44%-ը, ընդ որում, 2008 թ. համեմատությամբ, 2011 թ. ոլորտի շրջանառությունը կրկնապատկվել է:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հրապարակած տրվյալների համաձայն՝ ՀՀ-ում ՏՏ ոլորտում 2011 թ. դրությամբ գործում է 281 ընկերություն, որոնցից 174-ը՝ տեղական՝ 87 մլն ԱՄՆ դոլար, իսկ 107-ը՝ արտասահմանյան՝ 118.1 մլն ԱՄՆ դոլար հասությով: Ոլորտում զբաղված մասնագետների ընդհանուր թիվը 6760 է, ընդ որում, 3150-ը՝ տեղական, իսկ 3606-ը՝ արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերում: Հանրապետության բուհերում ՏՏ մասնագիտությամբ սովորող ուսանողների թիվը 6970 է⁸:

⁸ Տե՛ս <http://www.cif.am/eng/resources/report-on-the-state-of-the-industry/>, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Ծրագրային ապահովում և ծառայություններ. 2011 թ. ոլորտի հետազոտություն:

ՀՀ SS ոլորտի ցուցանիշների շարժը 2007-2010 թթ.⁹:

	2007	2008	2009	2010
Ուղղակի օտարերկրյա ներդրումների հոսքեր և պաշարներ* (ԱՄՆ դոլար)	9,018,600.00	11,236,000.00	4,575,400.00	2,823,600.00
SS ծառայությունների ծավալը (ԱՄՆ դոլար)	58,359,739.66	65,950,836.24	47,394,744.50	57,506,328.42
SS ծառայությունների ծավալը (մլն ՀՀ դրամ)	17754.2	20229.1	17910.0	20900.1

* Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում

Հայաստանում ծրագրային ապահովման բնագավառում առաջատար ընկերություններ են՝ Synopsys (ավելի քան 500 մասնագետ), Virage Logic, Mentor Graphics Inc. (մուտք գործեց հայկական շուկա՝ ձեռք բերելով Ponte Solutions Inc. ընկերությունը, որը կիսահաղորդիչների արտադրության և նախագծման համար մշակում է ծրագրային լուծումներ, Հայաստանում ունի խոշոր գիտահետազոտական կենտրոն)¹⁰ և շատ այլ կազմակերպություններ: Հայաստանյան SS ոլորտում առկա են նաև խորհրդատվական, բիզնես, ինչպես նաև աշխատուժի վերապատրաստման ծառայություններ մատուցող մի շարք ընկերություններ: Ըստ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տվյալների՝ SS ոլորտի ընկերությունների 80%-ից ավելին հիմնադրվել է 2008-2011 թթ. ընկած ժամանակահատվածում¹¹: Նույն աղբյուրի տվյալների համաձայն՝ 2011 թ. դրությամբ արտասահմանյան ընկերությունների 48%-ն ամերիկյան ընկերություններ են, շուկայի մյուս մասնաբաժինը պատկանում է եվրոպական ընկերություններին՝ 27%, հարաբերականորեն ավելի փոքր են ռուսական և ԱՊՀ տարածաշրջանի մյուս երկրների ընկերությունների՝ հայաստանյան շուկայում ունեցած մասնաբաժինները՝ մոտ 14.4%:

2007 թ. SUN Microsystems ընկերության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի ձեռնարկած համատեղ ծրագրի նպատակն էր Հայաստանի մի քանի բուհերում հիմնել ուսումնական լաբորատորիաներ, ծրագրային լուծումների մշակման գիտահետազոտական կենտրոն¹²: Հայաստանում գործում է նաև հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտ-

⁹ Տե՛ս <http://armstat.am/file/doc/99458123.pdf> <http://armstat.am/file/doc/99466693.pdf>
<http://armstat.am/file/doc/99466708.pdf>

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս <http://www.eif.am/eng/>

¹² Տե՛ս <http://www.eif.am/eng/resources/report-on-the-state-of-the-industry/>, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Ծրագրային ապահովում և ծառայություններ. 2011 թ. ոլորտի հետազոտություն:

րոնը, Microsoft նորամուծական կենտրոնը և այլն¹³: 2011 թ-ից Գյումրու տեխնոպարկի ծրագրի շրջանակում արդեն գործում են National Instruments և D-Link ընկերությունները:

Հայաստանյան SS ոլորտում առավել մեծ տեսակարար կշիռը պատկանում է ծրագրային ապահովման ծառայություններին, ընդ որում՝ վերջնական արդյունքի իրացման ծավալների կեսից ավելին բաժին է ընկնում տեղական շուկային, ինչը վկայում է այն մասին, որ մեծացել են տեղեկատվական համակարգերի՝ տնտեսության տարբեր ոլորտներում ներդրման ծավալները:

Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ բարձր տեխնոլոգիաների արտահանման տեսակարար կշռով 2010 թ. աշխարհի երկրների ցանկում առաջատար տեղեր են զբաղեցնում Ֆիլիպինները, Սինգապուրը, Մալթան, Մալայզիան, Կոստա Ռիկան, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, Կիպրոսը, Չինաստանը, Ճապոնիան, Արևելաասիական և Խաղաղօվկիանոսյան շրջանների երկրները և այլն¹⁴: Հայաստանն այս ցուցանիշով 244 երկրների շարքում զբաղեցնում էր. 2008 թ.՝ 134-րդ, 2009 թ.՝ 126-րդ, 2010 թ.՝ 110-րդ համապատասխանաբար 110, 126, 134-րդ տեղերը: Իր ենթախմբի (միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ) 56 երկրների ցանկում 2010 թ. մեր հանրապետությունը զբաղեցնում էր 15-րդ տեղը, իսկ 2009-2008 թթ.՝ 22-րդը: Ընդ որում, այս ենթախմբում է նաև նշված ցուցանիշով աշխարհի առաջատարը՝ Ֆիլիպինները, մինչդեռ առաջատար քառյակի մնացած երեք երկրներից երկուսը՝ Սինգապուրը և Մալթան, բարձր եկամուտ ունեցող երկրների ենթախմբին են դասվում, իսկ Մալայզիան՝ միջին եկամտից բարձր եկամուտ ունեցող երկրների ենթախմբին:

SS ոլորտի առանձնահատկություններից մեկն այն է, որ, չլիներով միևնույն աշխարհագրական տարածքում, ձեռնարկությունները կարող են արդյունավետ համագործակցել: Ուստի, ուղղակի օտարերկրյա ներդրումների հոսքերը մեծացնելու նպատակով ինչպես արտոնյալ կամ բարենպաստ պայմաններ ունեցող տնտեսական տարածքների ստեղծումը, այնպես էլ ոլորտում գործող ձեռնարկություններին տարաբնույթ հարկային արտոնությունների տրամադրումը կարևոր նշանակություն կունենա:

ՀՀ-ում ԱՏԳ արդյունավետ գործունեության հիմնական նախապայմանները ստեղծված են, սակայն որքանով են դրանք կիրառելի և իրատեսական, հնարավոր կլինի պարզել տևական ժամանակահատվածում:

Տեխնոլոգիական ձեռնարկչության առանձնահատկությունները ԱՏԳ-ներում

Ընդհանրապես, գործարարությունն առնչվում է այս կամ այն աստիճանի ռիսկի հետ, քիսում է շուկայական մրցակցության բուն տրամաբանությունից: Գիտատեխնիկական նորություններ պարունակող ներդրումային նախագծերը, որպես կանոն, շատ ավելի մեծ ռիսկերի հետ են կապված: Այլ

¹³ Ոլորտում գործող ընկերությունների ցանկը տե՛ս <http://www.cif.am/eng/> կայքում:

¹⁴ Տե՛ս <http://databank.worldbank.org/ddp/home.do?Step=3&id=4>

հավասար պայմաններում ներդրողները նախաձեռնում են մանսօրինակ ծրագրեր, երբ դրանց նվազեցման ուղղությամբ ռեալ երաշխիքներ կան: Ազատ տնտեսական գոտիների ստեղծման բուն նպատակներից մեկը այդօրինակ ռիսկերի առավելագույն նվազեցումն է: Բնականաբար, ներդրողի համար չափազանց կարևոր է տեխնոլոգիական նորույթի ներդրման հետ կապված ընդհանուր ռիսկի բոլոր բաղադրիչների որոշարկումը, դրանց գնահատումը և նվազեցման ուղղությամբ ցանկալի քայլերի իրականացումը:

Ընդհանուր առմամբ, տեխնոլոգիական նորամուծությունների վերաբերյալ որոշումները հիմնված են ապագային առնչվող տեղեկությունների վրա, քանզի նախնական գաղափարի, հասուն նորամուծության և շուկայում ներդրվելու գործընթացի միջև, որպես կանոն, տևական ժամանակահատված է ընկած: Ըստ այդմ՝ նորամուծությունը բնութագրվում է այնպիսի իրավիճակով, երբ նորահայտ գործունային համակցությունը չունի իր մանակը, որի հետ հնարավոր լինելու ուղղակի համեմատություններ անել: Այս իմաստով, նորամուծությունը, ստանդարտ գործարարության տեսանկյունից, ավելի շուտ ուղղված է վերջինիս կայունության դեմ: Մյուս կողմից՝ նորամուծությանն առնչվող նույնիսկ ամենաարդյունավետ որոշումը կայացվում է տեղեկատվության որոշակի անկատարության կամ սակավության պայմաններում: Նման դեպքերում առկա է որոշակի տեղեկատվական անհամաչափություն կամ դրա որոշակի մասի անհասանելիություն: Դա նշանակում է, որ տվյալ նորամուծությանը վերաբերող որոշումները մրցակցող ընկերությունների կողմից կարող են ընդունվել սկզբունքորեն տարբեր մեկնակետերից, նայած թե ինչպիսին է ձեռնարկատիրոջ կողմից նորամուծությունների ռիսկերը ճիշտ գնահատելու ու ըստ այդմ որոշումներ ընդունելու կարողությունը: Ապագայի անորոշությունը, բնականաբար, որոշակի անվստահություն է առաջացնում նորամուծություններին առնչվող վճիռներ կայացնելիս:

Նորամուծություններին վերաբերող այս անվստահությունը, թերևս, ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջավայրերով պայմանավորված շարժառիթներ: Ներքին դրդապատճառների գործողությունը, բնականաբար, պայմանավորված է սեփական ընկերության ներսում կատարվող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ելքի անորոշությամբ և այլընտրանքայնությամբ: Ձեռնարկատիրության մրցունակության պարամետրերը ձևավորելիս նորամուծություններին դրա մի մասի ակտիվների տրամադրումը առարկայական շարժառիթներ ունի. որպեսզի տվյալ ձեռնարկչությունն իր կայուն տեղը զբաղեցնի շուկայական հատվածում և ընդլայնի այն, բնականաբար, շարունակ պետք է նորույթներ առաջարկի շուկային, այլապես, մրցակիցների հետ հարաբերություններում, տանուլ կտա: Մակայն հենց որ միջոցները տեղաբաշխվում են մեծ ռիսկի հետ կապված հետազոտական ծրագրերում, ձեռնարկության կառավարման ընդհանուր ռիսկը մեծանում է:

Մյուս կողմից՝ որևէ ձեռնարկատիրոջ գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է ոչ միայն իր կառավարման ունակություններից և գործարար գրագիտությունից, ներքին ռեսուրսների համակցման

պատշաճ մակարդակից ու ռացիոնալությունից, այլև այն բանից, թե ինչ-պիսին է նրա՝ արտաքին միջավայրի գործոնների ազդեցության համապատասխան հաշվառումը: Մասնավորապես, էական նշանակություն ունեն տեղեկությունները մրցակից ընկերությունների կողմից իրականացվող այլ-ընտրանքային նորամուծությունների, ընդհանուր մակրոտնտեսական միջավայրի պայմանների փոփոխությունների վերաբերյալ: Փաստորեն՝ նորամուծությունների վերաբերմամբ ապագային առնչվող որոշումները մեծ չափի անորոշությամբ պայմանավորված սուբյեկտիվ տարրեր են պարունակում: Այս սուբյեկտիվությունը, թերևս, պայմանավորված է ոչ միայն անհրաժեշտ տեղեկատվության պակասով, այլև տեխնոլոգիական նորամուծություններին վերաբերող որոշումների արտակարգ համալրությամբ:

Այսպիսով՝ տեխնոլոգիական նորամուծությունների հետ կապված որոշումների ընդունման ռիսկերը հանրագումարային ձևով հանդես են գալիս անորոշության հետևյալ երեք մակարդակով.

1. տեխնոլոգիական լուծումների ռազմավարությունների հնարավոր ելքերի առնչությամբ,
2. հետազոտությունների և մշակումների արդյունքների գործնական իրացվելիության վերաբերյալ,
3. ձեռնարկության ընդհանուր գործերի վրա դրանց ազդեցության առումով:

Ի վերջո, անորոշության նման սուբյեկտիվ զգացողություններն էլ պայմանավորում են նորամուծությունների հետ կապված ձեռնարկատիրական ռիսկերը: Ամենաընդհանուր ձևով նորամուծություններին առնչվող ձեռնարկատիրական ռիսկերը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ *ներքին* և *արտաքին*: Ներքին ռիսկը առաջին հերթին պայմանավորված է նորույթի՝ տեխնիկապես իրականացնելու հնարավորությամբ: Այս ռիսկը բխում է այն բանից, որ բնագիտական-տեխնիկական փոխկապակցությունների ուսումնասիրության ժամանակ որպես երկրորդական դիտված գործոնները (արգելքներ) նորույթի ներդրման փուլում կարող են դառնալ որոշիչ՝ զգալիորեն բարդացնելով կամ անհնար դարձնելով ակնկալվող արդյունքների ստացումը: Բացի այդ, այս կամ այն տեխնիկատեխնոլոգիական լուծման փնտրտուքը երբեմն կարող է հանգեցնել ստեղծագործական նոր արդյունքների, որոնք նախատեսված չէին սկզբնական ծրագրով:

Չպետք է բացառել նաև, այսպես կոչված, այլընտրանքայնության ռիսկը, երբ որևէ նորույթից ակնկալվող արդյունքի փոխարեն անսպասելիորեն ստացվեն բոլորովին այլ արդյունքներ, որոնք թեև չէին նախատեսվել, սակայն, ելակետային պայմանների փոփոխության դեպքում, կարող են դառնալ նոր գործարարության ձևավորման աղբյուր: Այդպիսին կարող է լինել, օրինակ՝ որևէ դեղամիջոցի առաջացրած հարակից էֆեկտը, որը երբեմն կարող է ավելի ցանկալի լինել, քան նորույթից ուղղակիորեն ակնկալվող, սակայն այդպես էլ չստացված արդյունքը:

Ներքին ռիսկերը կարող են կապված լինել նաև ծախսերի մեծացման հետ: Նորույթի ներդրման ընթացքում, հնարավոր է, փոփոխության ենթարկվեն նախագծի իրականացման հետ կապված ծախսերը, որոնք անհամեմատ կբարդացնեն ցանկալի արդյունքների ստացումը: Ներքին ռիսկի

այս տեսակի հետ սերտորեն կապված է ժամանակի ռիսկը, ինչը ևս կարող է լրջորեն վտանգել նախանշված արդյունքների ստացումը: Ժամանակի գործոնը կարող է վճռորոշ դեր խաղալ հատկապես տնտեսական պարբերաշրջանի անբարենպաստ փոփոխությունների դեպքում:

Արտաքին ռիսկերը ավելի շատ կախված են արտաքին միջավայրի պայմանների փոփոխություններից: Դրանք կապված են հատկապես մակրոտնտեսական պայմանների, ինչպես նաև պահանջարկի փոփոխությունների հետ:

Նորամուծությունների գործընթացին բնորոշ ռիսկերը կարելի է խմբավորել՝ ելնելով տարբեր փուլերում առկա անորոշությամբ պայմանավորված գործոնների ազդեցությունից: Այսպես՝

• **Ինքնատիպության ռիսկ:** Որքան յուրօրինակ է նորույթը, որքան արժատական է դրա հիմքում դրված տեխնոլոգիական սկզբունքը, այնքան ավելի բարդ է ներդրման ու հաջող առևտրայնացման գործընթացը: Մյուս կողմից՝ նման նորույթի ներդրման հավանականությունը մեծ չէ, քանի որ պահանջում է լուրջ նախապատրաստական ծախսեր, շուկայագիտական ուսումնասիրություններ, ճկունություն և հետևողական ջանքեր: Նման նորամուծությունների դեպքում խիստ կարևոր է բարձր տեխնոլոգիական մշակումների շուկայական ներդրման մարքեթինգային հիմնավորումը:

• **Տեխնոլոգիական ռիսկ:** Սա որոշակիորեն կապված է այն բանի հետ, թե նորույթը որքանով է պիտանի արդյունաբերական ներդրման համար: Դա այս կամ այն տեխնոլոգիայի ներդրումային գրավչության կարևոր գործոններից է: Բնականաբար, այն տեխնոլոգիաները, որոնք ունեն համանման օրինակներ, ներդրման տեսանկյունից ավելի մատչելի են, քան հենքային կամ, այսպես կոչված, «պիոներ» տեխնոլոգիաները: Սկզբունքորեն՝ նոր մշակումը ստեղծողից պահանջում է դրա ներդրման տեխնոլոգիական հնարավորության վերաբերյալ համոզիչ հիմնավորումներ:

• **Տեղեկատվական ռիսկ:** Այս դեպքում ռիսկը մեծ մասամբ պայմանավորված է կամ դրա ժամանակավրեպությամբ, կամ առկա միջավայրում դրա անհամապատասխանությամբ: Կարող է նույնիսկ այնպես պատահել, որ արդեն ստեղծման ենթակա տվյալ տեխնոլոգիան հնացած լինի: Այդ դեպքում դրա ներդրումը կարող է լուրջ կորուստներ պատճառել ներդրողի՝ համանման, սակայն, նորույթի և առևտրայնացման ավելի բարձր աստիճանի տեխնոլոգիաների առկայության վերաբերյալ անտեղյակության պատճառով:

• **Իրավական ռիսկ:** Ներդրողը բախվում է մտավոր սեփականության արդյունքի պաշտպանության անկատար մեխանիզմներին: Պատենտավորման համակարգի թերգարգացած վիճակը, միջազգային ատյաններում մտավոր սեփականության իրավունքների լիարժեք պաշտպանության հնարավորության բացակայությունը կարող են չնախատեսված հավելյալ ծախսեր հարուցել և նույնիսկ ձախողել ողջ նախագիծը: Նշված անհամապատասխանությունը կարող է ի հայտ գալ՝ կապված նորույթը ստեղծողի կողմից դրա այս կամ այն հատկությունը գաղտնի պահելու կամ, ընդհակառակը, նորույթին առնչվող տեղեկությունները երրորդ անձանց չփոխանցելու հանձնառության դրժման հետ: Վերջապես՝ սեփականատերը կարող

է ներդրողից թաքցնել նորույթի ներդրման համար պահանջվող գումարի իրական չափը՝ դա բացահայտելով պայմանագրի կնքումից հետո միայն, համոզված լինելով, որ այլևս հետդարձի ճանապարհ չի լինի:

• **Ֆինանսական ռիսկ:** Ռիսկի այս դրսևորման դեպքում ֆինանսական միջոցները կարող են պարզապես բավարար չլինել նորույթի լիարժեք ներդրման համար: Դա կարող է տեղի ունենալ գյուտի սեփականատիրոջ՝ իր ներդրման գերազնահատման պատճառով, ինչի հետևանքով կվտանգվի ներդրման ողջ գործընթացը: Փորձը ցույց է տալիս, որ տեխնոլոգիայի ստեղծման և ներդրման ծախսերը, միջին հաշվով, արտադրանքի ընդհանուր ինքնարժեքի տասը տոկոսից չեն անցնում, և, որպես կանոն, գիտնականներն ու ինժեներները հակված են շատ ավելի մեծ գումարներ պահանջել, քան իրականում նորույթի ներդրումը կարող է երաշխավորել: Վերջիններիս միշտ էլ դժվար է համոզել, որ ներդրողի համար գլխավոր կողմնորոշիչը իր կապիտալի ներդրման այլընտրանքային հնարավորությունների գնահատումն է, որով էլ պայմանավորված է ինչպես ներդրումների եկամտաբերության, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրի ռիսկայնության գնահատումը: Այսպես թե այնպես, նորամուծություն պարունակող ծրագրի ձախողման դեպքում նորույթի սեփականատերը գրեթե ոչինչ չի կորցնում, իսկ ներդրողը ոչ միայն ստույգ կորցնում է իր ներդրած ֆինանսական ու նյութական միջոցները, այլև այլ ոլորտներում դրանք ներդնելու հնարավորությունը:

• **Ծրագրի անկառավարելիության ռիսկ:** Սա կարող է կապված լինել ներդրման ծրագրի տարբեր բաղադրիչների միջև տարաբնույթ հակասությունների առաջացման հետ: Որպես կանոն, նորամուծության ստեղծման և արդյունաբերական յուրացման փուլերում ընդգրկված մարդկանց մասնագիտական պատրաստվածության ու ակնկալիքների աստիճանները տարբեր են. եթե ներդրողին հետաքրքրում է գլխավորապես շահույթը, ապա նորույթի սեփականատիրոջը, առաջին հերթին՝ իր ստեղծածը ներդրված տեսնելու ցանկությունը, իսկ եկամուտներ կարելի է ստանալ դրա բազմակի ներդրման արդյունքում:

• **Գործարարության անկառավարելիության ռիսկ:** Ռիսկի այս տեսակը կարող է պայմանավորված լինել ռազմավարական ներդրողի և նորույթը ներդրող ձեռնարկության շահերի անհամապատասխանությամբ: Որպես կանոն, վերջինս առավելապես կողմնորոշված է դեպի ընթացիկ շահույթները, իսկ ռազմավարական ներդրողին առաջին հերթին հետաքրքրում են նորույթի ներդրումից սպասվող գերշահույթները:

АТОМ МАРГАРЯН

Декан факультета „Экономического регулирования и международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

АСМИК ДЖУГАРЯН

Ассистент кафедры „Экономической теории” АГЭУ, кандидат экономических наук

Проблемы развития свободных экономических зон в Республике Армения.- В статье обсуждаются проблемы формирования и развития свободных экономических зон в Республике Армения. Были рассмотрены международная практика и сравнительные преимущества разных стран в этой сфере. Обсуждалась специфика развития свободных экономических зон в РА, особенно рассматривались законодательные, институциональные и инфраструктурные проблемы урегулирования этой сферы. Обоснован тезис, согласно которому, главной целью развития СЭЗ является вовлечение прямых иностранных инвестиций и создание передовых технологий. В этом аспекте были рассмотрены практика и проблемы РА в сфере информационных технологий.

АТОМ MARGARYAN

Dean of the department of „Regulation of Economy and International Economic Relations” at ASUE, PhD in Economics, associate professor

HASMIK JUHARYAN

Assistant at the Chair of „Theory of Economics” at ASUE, PhD in Economics

Development problems of free economic zones in the Republic of Armenia.- The subject of this research paper is the formation and development problems of free economic zones (FEZ) in the Republic of Armenia. The international practice of formation of FEZ is discussed, also comparative advantages of various countries in the area are pointed out here. In this paper FEZ formation characteristics in the RA are considered, particularly the legislative, institutional and infrastructural regulation problems have been studied. It is a grounded statement that FEZ development in the RA requires foreign investment attraction and development of high technologies. From this prospective, Armenia’s practice and fundamental issues in the sphere of information technology development have been prioritized and studied.